աղջկա մորեղբոր կարծիքին։ Այս սովորությունը մնացորդ է մատրիարխատի՝ մայրիշխանության ժամանակներից։ Աղջկա տիրոջ համաձայնությունը ստանալով՝ աղջկան տալիս էին **բửrգաճ**[8] նշան։

Նշանն օրհնում էր քահանան այս առիթով տրված հացկերույթի ժամանակ։ Քահանայի ներկայությունը վերջերս արդեն անհրաժեշտ չէր, ինչպես և գյուղի տանուտերի ներկայությունը։ Վերջինիս մասնակցությունը հնում, նաև էր բաժանում ներկա եղողների մեջ նշանի հետ բերված **սrբազաճ ճալվաճ**, ինչպես և երկու կողմերի մոտիկ ազգականների ներկայությունը, տալիս էր **ճշաճտrվէfիճ** հասարակական բնույթ, որով արդեն **վկայվում էr** տղայի և աղջկա միջև հաստատվելիք կապի վավերականությունը և ընդգծվում էր, որ դրա համար ստացված է և՛ համայնքի, և՛ տոհմի համաձայնությունը, որն անշուշտ պահանջվում էր նախնական տոհմական կարգերի ժամանակ։ Հացկերույթի միսը, շաքարը, գինին և այլն տղայի ծնողները ուղարկում էին նախօրոք համաձայնեցրած չափով։

Bửrգաճ էին բերում մի այնպիսի բան, որ աղջկա ձեռքին անցկացրած (մատանի) կամ վզից կախված (ոսկե վզնոց, դրամների շարան)[9] կարող էր ցույց տալ, որ աղջիկն արդեն մեկին խոստացված է։ Այդ խոստմանն ավելի հրապարակական բնույթ տալու համար **Ծաղկաrդաrիճ**՝ Ծաղկազարդի օրը, երբ առհասարակ բոլոր չամուսնացած աղջիկները և տղաներն այցելում էին ժամերգությանը, նշանված տղան մի զույգ մոմ ձեռքին բռնած՝ կանգնում էր իր նշանած աղջկա առջև, իսկ տղայի տերը՝ մայրը, նույնպես և ազգականները, աղջկա գլխին ձգում էին **չաrղաբ**[10]։

Նշաճտվէfիճ, ինչպես և ամուսնության վերաբերող այլ հրավերքներին, առատ խմվում էր գինի և օղի՝ նախնական կարգերում գործածվող նվիրական խմիչքի փոխարեն։ Հետաքրքրական է, որ և այս դեպքում, ինչպես և ամեն ուրախության՝ թեկուզ լինեք երեկո, նոր մտնողը պիտի ասեր **պաrիլծս**[11], **պօլօrիտ աչfը լծս**—երեկոյի կամ գիշերվա անուն չէին տալիս՝ գիշերն արթուն կեցող չար ոգիների ուշադրությունը գրավելու երկյուղից։

Նշանը բերում էին մի խնձորի կամ նռան մեջ խրած, և այսպես ամեն անգամ, երբ նշանված աղջկան տալիս էին նվեր՝ որևէ ոսկե իր կամ դրամ։ Սրանով խրախուսվում էր, որ հարսն էլ խնձորի և նռան պես բազմանալու ընդունակություն ունենա։

Նշաճտվէfիճ տղան ներկա չէր լինում, իսկ աղջիկը սենյակից փախչում էր։ Երբեմն նրան հրավերքի վերջը ներս էին բերում գլխին **չաrղաբ** ձգած և նա հերթով համբուրում էր բոլոր հասակավորների ձեռքերը և փոխարենն ստանում էր նվեր՝ մանր դրամ։

Հաճախ պատահում էր և այնպես, որ բոլոր հյուրերի ցրվելուց հետո զոքանչը փեսացուին, որը սպասելիս էր լինում այդ ցրվելուն և տան երդիկից դիտում, ծածուկ տանում էր առանձին սենյակ և հյուրասիրում **ճշաճտվէfից** մնացած կերակուրներով կամ հատկապես պատրաստած մեղրով ձվածեղով։

---

[8] Մեղրու բարբառով՝ **նի՛չէն**։

[9] Մեղրիում **ճշաճտվէfի** ժամանակ փեսացուից ու նրա ծնողներից հարսի ստացած նվերը կոչվում է **ի՛rուձջծir**՝ երեսաջուր։

[10] Այս հրապարակական հայտարարումը ավելի հանդիսավոր կերպով կատարվում էր Ղարաբաղում, որտեղ տղայի ձեռքը տրվում էր վառվող մոմերով և գույն-գույն կտորներով զարդարված նորաբողբոջ ճյուղ։

[11] Մեղրու բարբառով՝ **պա՛rիլխ**։